ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1971—1980)

ՍԵՐԳԵՅ ԱՄԻՐՅԱՆ

Զարգացած սոցիալիզմի պայմաններում մեծապես աճում է կուսակցության ղեկավար դերը գաղափարախոսական բոլոր հիմնարկների, այդ թվում նաև կուլտուր-լուսավորական օջախների նկատմամբ։ Իր հերթին հասարակության մեջ ուժեղանում է նաև կուլտուր-լուսավորական հիմնարկների դերն ու նշանակությունը, ընդլայնվում է դրանց սոցիալական ֆունկցիան։

Եթե սովետական իշխանության առաջին տարիներին ակումբային և գրադարանային հիմնարկների գլխավոր խնդիրն անգրագիտության դեմ պայքարն էր, իսկ սոցիալիստական հասարակության կառուցման ժամանակամիջոցում սոցիալիստական մշակույթին աշխատավոր մասսաներին հաղորդակից անելը, նրանց ստեղծագործական ընդունակությունների զարգացումը, ապա զարգացած սոցիալիզմի պայմաններում, երբ կուսակցությունն առաջ քաշեց մարդու կոմունիստական դաստիարակության, գաղափարախոսական աշխատանքը կյանքի, տնտեսական հարցերի լուծման հետ մերձեցնելու կարևորագույն պրոբլեմները, կուլտուր-լուսավորական հիմնարկների գործունեության շրջանակներն անհամեմատ ընդլայնվեցին։ Դրանց առջև խնդիր դրվեց դառնալու աշխատավորների բարոյաքաղաքական, աշխատանքային, ինտերնացիոնալ, գեղագիտական դաստիարակության իսկական օջախներ, ակտիվորեն զբաղվելու սոցիալիստական մրցության կազմակերպման, աշխատանքի առաջավոր փորձի, հայրենասիրական շարժումների տարածման, սովետական ծեսերի և սովորույթների արմատավորման հարցերով, լավագույնս կազմակերպելու աշխատավորության հանգիստն ու ժամանցը։

Կուլտուրայի հիմնարկների սոցիալական ֆունկցիաների նման ընդլայնումն ու բարդացումը պահանջեց միանգամայն նոր մոտեցում ցուցաբերել նաև դրանց կառավարման նկատմամբ։ Այդ մասին ամբողջ ուժով մեկ անգամ ևս շեշտվեց ՍՄԿԿ Կենտկոմի «Ակումբային հիմնարկների և մարզական կառուցվածքների օգտագործումը բարելավելու միջոցառումների մասին» 1985 թ. հունիսի 12-ի որոշման մեջ։ Նրանում մասնավորապես ասված է. «Սկզբնական կուսակցական կազմակերպությունները պետք է կանոնավոր կերպով քննության առնեն և հաստատեն մշակույթի պալատների ու տների, ակումբների, զբոսայգիների, գրադարանների, թանգարանների և մարզական կառուցվածքների աշխատանքի պլանները, միջոցներ ձեռնարկեն դրանց գործունեությունը բարելավելու համար, այդ գործում բարձրացնեն արհմիութենական և կոմերիտական կոմիտեների դերը»[1]։

Ակումբների, կուլտուրայի տների, գրադարանների, թանգարանների կառավարման կատարելագործման, նրանց նյութական բազայի ընդլայնման, աշխատանքի բովանդակության բարելավման, մասնագիտական կադրերի պատրաստման հարցերին պարբերաբար անդրադարձել են կոմունիստական կուսակցությունը, նրա Կենտրոնական կոմիտեն, սովետական կառավարությունը։ ՍՄԿԿ XXIII համագումարի ձևակերպմամբ այդ հարցերը պետք է դառնային «ամբողջ կուսակցության, նրա բոլոր կազմակերպությունների, սովետների, արհմիությունների, կոմերիտմիության, քաղաքի ու գյուղի աշխատավորների բոլոր կոլեկտիվների գործը»[2]։ Զարգացած սոցիալիզմի պայմաններում կուլ-

---

1 «Սովետական Հայաստան», 16. VI. 1985։

2 «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», Երևան, 1967, էջ 306։

տուր-լուսավորական հիմնարկների գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ կուսակցության հռչակած հիմնադրույթները զարգացվեցին ՍՄԿԿ XXIV—XXVI համագումարների նյութերում, գաղափարա-դաստիարակչական աշխատանքների մասին ՍՄԿԿ Կենտկոմի ընդունած որոշումներում։

Անշեղորեն կենսագործելով ՍՄԿԿ համագումարների և կուսակցության Կենտկոմի որոշումները, Հայաստանի կոմկուսը 1970-ական թվականներին պգալիորեն բարձրացրեց կուլտուրայի հիմնարկների ղեկավարման մակարդակը, ավելի մոտիկից սկսեց զբաղվել դրանց գործունեության պրակտիկ խնդիրներով և առաջին հերթին կուլտուրայի հիմնարկների գերատեսչական կառավարման և ղեկավարման աշխատանքների մակարդակի բարձրացմամբ։ Կուսակցական փաստաթղթերում ու դիրեկտիվ մարմինների որոշումներում հատուկ ուշադրություն էր նվիրվում Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության գործունեության բարելավմանը, որի հիմնական խնդիրներից մեկը կուլտուր-լուսավորական հիմնարկների ղեկավարության ապահովումն էր։ Բավական է ասել, որ 1971 թ. հունվարի 1-ի դրությամբ մինիստրությանը ենթակա շուրջ 2550 կուլտուրայի օջախներից 2450-ը կուլտուրա հիմնարկներն էին կազմում։ Ընդ որում, հանրապետությունում գործող 1139 ակումբային հիմնարկների, 1260 պետական մասսայական գրադարանների և շուրջ 40 թանգարանների ավելի քան 90 %-ը գտնվում էր կուլտուրայի մինիստրության համակարգում[3]։ Մինիստրության կենտրոնական ապարատի ստեղծագործական 5 բաժիններից 3-ը համապատասխանաբար իրագործում էին ակումբների կուլտուրայի տների և զբոսայգիների, գրադարանների ու թանգարանների ղեկավարությունը։ Ահա թե ինչու կուլտուրայի մինիստրության կենտրոնական ապարատի աշխատանքի մակարդակից էր մեծապես կախված նաև կուլտուրա հիմնարկների գործունեության արդյունավետության բարձրացման հարցը։

Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կենտրոնական ապարատի, սկզբնական կուսկազմակերպության գործունեությունը մշտապես իր տեսադաշտում էին պահում ՀԿԿ Կենտկոմը, ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը և կուսակցության Երևանի քաղկոմը։ 1973 թ. հունիսին Հայաստանի կոմկուսի Երևանի քաղաքային կոմիտեն քննարկեց «Ապարատում կուսակցական-պետական կարգապահությունը ամրապնդելու, հանձնարարված գործի նկատմամբ ղեկավար կադրերի և կոմունիստների պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կուսակցական կազմակերպության աշխատանքի մասին» հարցը[4]։ Որոշման մեջ բացահայտվում էին մինիստրության կուսկազմակերպության աշխատանքում եղած լուրջ թերությունները։ Դրանում մասնավորապես նշվում էր, որ մինիստրության կուսբյուրոն անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում ապարատի աշխատողների պատասխանատվության բարձրացմանը՝ մինիստրությանը ենթակա հիմնարկների և կազմակերպությունների աշխատանքի ղեկավարումը բարելավելու գործում։ Կուսակցության քաղկոմը կուսկազմակերպության բյուրոյին պարտավորեցնում էր ձեռք առնել գործնական միջոցներ՝ մինիստրության կենտրոնական ապարատի գործունեությունը կատարելագործելու, դրա հստակ և ճկուն աշխատանքն ապահովելու ուղղությամբ։

Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության ոչ բավարար աշխատանքի մասին նշվեց նաև ՀԿԿ Կենտկոմի 1973 թ. նոյեմբերյան պլենումում[5]։ Պլենումի որոշման մեջ ընդգծվում էր, որ կուլտուրայի մինիստրության կուսկազմակերպությունն անհրաժեշտ ներգործություն չի ապահովում ապարատի բոլոր օղակների աշխատանքի բարելավման, պետական կարգապահության ամրա-

3 Վիճակագրական տվյալների հիման վրա հաշվարկը կատարվել է մեր կողմից։ Տվյալները տե՛ս «Народное образование, наука и культура в Армянской ССР. Статистический сборник», Ереван, 1981, с. 39, 108, 115, 127, 130, 132.

4 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 47, ց. 49, գ. 12, թ. 125—129։

5 Նույն տեղում, ֆ. 1, ց. 105, գ. 25, թ. 91—92։

պընդման վրա։ Նրա գործունեությունում բացակայում է նպատակամղվածությունը և մարտունակությունը, չի ստեղծվել բարձր պահանջկոտության փոխադարձ մթնոլորտ, անհանդուրժողականություն՝ կուլտուրայի բնագավառում տեղ գտած թերությունների և բացթողումների հանդեպ։

Վերադաս կուսակցական մարմինների որոշումները լուրջ քննարկման առարկա դարձան Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի նիստերում և կուսակազմակերպության ժողովներում[6]։ Կուլտուրայի մինիստրության ղեկավարության, կուսակազմակերպության, ապարատի բոլոր օղակների հասցեին արված սկզբունքային կուսակցական քննադատությունը դրդեց զբաղվելու մինիստրության, նրա ենթակայությամբ գործող կուլտուրայի հիմնարկների գործունեության խոր և բազմակողմանի ստեղծագործական վերլուծությամբ։ Այն հնարավորություն տվեց շատ բան վերանայելու և վերաիմաստավորելու, ավելի առարկայական ու ճկուն դարձնելու մասնավորապես կուլտլուսհիմնարկների ղեկավարությունն ապահովող բաժինների աշխատանքը։ Կոլեգիաներում ավելի հաճախակի և գործարար մթնոլորտում սկսվեցին քննարկվել հանրապետությունում կուլտուր-լուսավորական աշխատանքի հետագա զարգացման համար կենսական նշանակություն ունեցող հարցերը։ Եթե 1971—1972 թթ. մինիստրության կոլեգիայում քննարկվել էին կուլտլուսաշխատանքի վերաբերյալ 10 հարց, ապա 1973 թ. քննարկված այդպիսի հարցերի թիվը հասավ 21-ի, իսկ հետագա տարիներին՝ 25—30-ի[7]։ Հավասարապես ուշադրության կենտրոնում էին պահվում ակումբների, կուլտուրայի տների, գրադարանների, թանգարանների և զբոսայգիների գործունեության բոլոր ոլորտները[8]։ Հիմնական ուշադրությունը դարձվում էր կատարված աշխատանքների ամփոփմանը, տեղ գտած թերությունների բացահայտմանը և, ամենագլխավորը, դրանց վերացմանն ուղղված միջոցառումների մշակմանը։ Ձեռք առնված միջոցառումները շոշափելի արդյունք տվեցին։ Արդեն 1975 թ. տեղաշարժերը նկատելի էին աշխատանքի գրեթե բոլոր ուղղություններում։ Ամենից առաջ մի շարք միջոցառումներ իրականացվեցին կուլտուրայի հիմնարկների կառավարման կատարելագործման ու դրանց գործունեության բարելավման ուղղությամբ։ Այսպես, ժողովրդական դեպուտատների քաղաքային ու շրջանային սովետների գործկոմների կուլտուրայի բաժինների և կուլտլուսհիմնարկների հաշվետվությունները կարգավորելու նպատակով ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը, ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության համաձայնությամբ, գործողության մեջ դրեց հաշվետվությունների միասնական ձևեր, որոնք ընդգրկում էին կուլտուրայի հիմնարկների գործունեության բոլոր հիմնական ոլորտները[9]։ Ուժեղացավ մինիստրության, ժողովրդական ստեղծագործության հանրապետական տան և կուլտլուսաշխատանքի գիտամեթոդական կաբինետի կողմից կուլտուրայի հիմնարկներին ցույց տրվող օգնությունը։ Միայն 1974 թ. հանրապետության 16 շրջաններում և 6 քաղաքներում ակումբային աշխատողների համար անցկացվեցին 2—5-օրյա սեմինար պարապմունքներ[10]։ Կուլտլուսհիմնարկներին ցույց տրվող մեթոդական ու գործնական օգնության լավ կազմակերպումն ապահովելու նպատակով կուլտուրայի մինիստրության կուլտլուսաշխատանքի գիտամեթոդական կաբինետին գիտամեթոդական գրականություն հրատարակելու իրավունք տրվեց[11]։ Բարելավվեց հրատարակվող մեթոդական գրականության քանակն ու որակը։ 1973 թ. հրատարակվեցին և տեղերն ուղարկվեցին 10, իսկ 1974-ին՝ 12 բրոշյուր։ Դրանց թիվը հետագա տարիներին համապատասխանաբար ավելացավ[12]։ Կազմվեցին, քննարկվեցին

6 Նույն տեղում, ֆ. 4241, ց. 1, գ. 49, թ. 18—28։

7 Նույն տեղում, գ. 51, թ. 122, գ. 53, թ. 84։

8 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 27, թ. 57—66, 84—91, 92—93, գ. 24, թ. 44—50, գ. 30, թ. 55—62։

9 Նույն տեղում, գ. 124, թ. 1։

10 Նույն տեղում, գ. 24, թ. 45։

11 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 105, գ. 31, թ. 30, 75։

12 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 24, թ. 46։

և հաստատվեցին ակումբային հիմնարկների գործունեությանը վերաբերող մի շարք կանոնադրություններ, որոնց թվում «Հայկական ՍՍՀ ակումբային հիմնարկների կանոնադրությունը», «Շրջանային կուլտուրայի տան մեթոդկաբինետի կանոնադրությունը», «Ժողովրդական թատրոնների կանոնադրությունը» և այլն[13]։

ՀԿԿ Կենտկոմը և կուսակցության Երևանի քաղկոմը մշտական հսկողության տակ էին պահում կուլտուրայի մինիստրության կողմից կուսակցական որոշումների կատարման ընթացքը։ Մինիստրությունը պարբերաբար զեկուցագրեր էր ներկայացնում հանրապետության կուսակցական և պետական վերադաս մարմիններին, որոնցում ոչ միայն հաշվետու էր լինում կատարված աշխատանքի վերաբերյալ, այլև կուսակցական և պետական քննարկման էր ներկայացնում այն հարցերը, որոնց լուծումը հանրապետության դիրեկտիվ մարմինների միջամտությունն էր պահանջում։ Այսպիսով, ՀԿԿ Կենտկոմի, կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեի, ինչպես նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման վրա սահմանված մշտական կուսակցական և պետական վերահսկողությունը, գործնականում կուլտուրայի հիմնարկների գերատեսչական ղեկավարման կատարելագործման պրոցեսը դարձնում էր անընդմեջ։ Աշխատանքի նման ոճի շնորհիվ մասնավորապես 9-րդ և 10-րդ հնգամյակների տարիներին դիրեկտիվ մարմինների կողմից ընդունվեցին կուլտլուսաշխատանքներին վերաբերող մի շարք որոշումներ։ Միայն 1975 թ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոն երկու և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը երեք անգամ քննարկեցին բացառապես կուլտլուսհիմնարկների գործունեությանը վերաբերող հարցեր։ Առանձնապես մեծ կարևորություն ուներ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1975 թ. ապրիլի 18-ի «Կուլտուր-լուսավորական հիմնարկների ղեկավարման գործում կուսակցական կազմակերպությունների աշխատանքի մասին» որոշումը[14]։ Դրա ամենագլխավոր արդյունքը եղավ այն, որ տեղերում անհամեմատ ուժեղացավ ուշադրությունը կուլտուրայի հիմնարկների նկատմամբ, դրանց կառավարումը բարելավելու, գործունեությունը կատարելագործելու հարցերը դարձան կուսակցական և սովետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և տնտեսական օղակների մշտական հոգածության առարկա։ Բարելավման պրոցեսն ընդգրկեց աշխատանքի բոլոր ասպարեզները՝ կուլտուրայի օբյեկտների շինարարության, ակումբային հիմնարկների շենքերը կողմնակի կազմակերպություններից ազատելու, կուլտլուսաշխատողների ուսուցման, կուլտլուսհիմնարկներին գիտամեթոդական օգնություն ցույց տալու, «Կուլտուր-լուսավորական աշխատանք» բյուլետենի գործունեության և այլն։

1975 թ. հանրապետության 36 շրջանային կուլտուրայի տներից 26-ում ստեղծվեցին մեթոդկաբինետներ։ Դրանց կողքին երևան եկան կազմակերպական նոր օղակ հանդիսացող ժողովրդական ստեղծագործության կաբինետները, որոնցում հատկացված լրացուցիչ հաստիքներով աշխատանքի անցան մեթոդիստները[15]։ Թալինի և Աշտարակի շրջանային կուլտուրայի տներին կից գործող ժողովրդական ստեղծագործության կաբինետների առաջին իսկ ամիսների աշխատանքը ցույց տվեց, որ դրանք մեծապես նպաստում են գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը և, հատկապես, ժողովրդական վարպետների և ինքնուս ստեղծագործողների բացահայտմանն ու նրանց գործերի պրոպագանդմանը։ Ուսանելի էր նաև մեկ այլ նախաձեռնություն. վերոհիշյալ կաբինետներին առընթեր ստեղծվեցին ժողովրդական ստեղծագործության թանգարաններ[16]։

1975 թ. գյուղական երեք բնակավայրերում կազմակերպվեցին ակումբային նոր հիմնարկներ, իսկ գյուղական 32 ակումբներ վերածվեցին կուլտու-

---

13 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4241, ց. 1, գ. 55, թ. 62։

14 Նույն տեղում, ց. 111, գ. 86, թ. 90—97, «Լենինյան ուղիով», 1985, № 4, էջ 58։

15 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4241, ց. 1, գ. 55, թ. 63—64։

16 Նույն տեղում, թ. 64։

բայի տների և այդ կապակցությամբ դրանց հատկացվեցին գեղմասվարների լրացուցիչ հաստիքներ։ Առաջին անգամ հանրապետության գյուղական վայրերում կազմակերպվեցին 11 ավտոակումբներ, որոնց առջև խնդիր դրվեց ապահովելու դաշտային աշխատանքներում, անասնապահական ֆերմաներում և յայլաղներում զբաղված գյուղի աշխատավորների կուլտուրական սպասարկումը։ Այդ նպատակով հատկացվեցին 11 ակումբի վարիչի, 11 ավտովարորդի հաստիքներ և նույնքան «Կուրան» մակնիշի ավտոմեքենաներ, անհրաժեշտ բոլոր սարքավորումներով հանդերձ[17]։ Նույն տարում գեղարվեստական 17 կոլեկտիվների շնորհվեց ժողովրդականի կոչում և այդ կապակցությամբ շրջանային կուլտուրայի տներին լրացուցիչ տրամադրվեցին դիրիժորների, ռեժիսորների և բալետմայստերների 34 հաստիքներ[18]։

Բերքահավաքի օրերին մինիստրության ժողովրդական ստեղծագործության տան և մեթոդկաբինետի հատուկ բրիգադները, ինչպես նաև մինիստրության ակումբային հիմնարկների և ժողովրդական ստեղծագործության բաժնի աշխատողները լինում էին շրջաններում, տեղում ծանոթանում կուլտլուսաշխատանքի դրվածքին և անհրաժեշտության դեպքում ժողովրդական դեպուտատների շրջգործկոմների կուլտուրայի բաժիններին օգնում կազմակերպական աշխատանքներում։ Այսպես, օրինակ, 1975 թ. այդ խմբերը եղան Գորիսի, Սիսիանի, Ղափանի, Ապարանի շրջաններում, կազմակերպեցին կուլտլուսհիմնարկների և գեղարվեստական ինքնագործունեության խմբերի ստեղծագործական մրցությունը՝ գյուղի աշխատավորների լավագույն սպասարկման համար։ Իսկ Թումանյանի և Նոյեմբերյանի շրջաններում անցկացվեցին ակումբային աշխատողների խորհրդակցություններ, որոնց օրակարգում դրված էին գյուղատնտեսական արտադրությանը կուլտլուսաշխատանքի միջոցներով օժանդակելու հարցերը։ Այնուհետև բերքահավաքի ընթացքում այդ երկու շրջանների կուլտլուսհիմնարկների կատարած աշխատանքների արդյունքները դրվեցին ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիայի քննարկմանը։ Կոլեգիան լուրջ թերություններ բացահայտեց այդ գործում։ Դա օգնեց աշխատավորների սպասարկումը բարելավել ոչ միայն այդ երկու շրջաններում, այլև ընդհանրապես[19]։

Կուլտլուսհիմնարկներին ցույց տրվող գիտամեթոդական և գործնական օգնությունն ուժեղացնելու նպատակով ժողովրդական ստեղծագործության տան, կուլտլուսաշխատանքի գիտամեթոդական կաբինետի և կուլտուրայի աշխատողների վերապատրաստման մշտական գործող դասընթացների բազայի վրա ստեղծվեց կուլտուր-լուսավորական աշխատանքի հանրապետական գիտամեթոդական կենտրոն, որն իր գործունեությունը ծավալեց 1976 թ.[20]։ Հետագայում (1979) այն վերակազմվեց Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության և կուլտուր-լուսավորական աշխատանքի հանրապետական գիտամեթոդական կենտրոնի։ Նույն՝ 1979 թ. ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության կենտրոնական ապարատի ակումբային հիմնարկների և կուլտուրայի ու հանգստի զբոսայգիների բաժինը վերակազմվեց ակումբային հիմնարկների և ժողովրդական ստեղծագործության վարչության[21]։

Չափազանց կարևոր էին նաև այն միջոցառումները, որոնք իրագործվեցին գրադարանային հիմնարկների կառավարման բարելավման ուղղությամբ։ Այս առումով մեծ նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1974 թ. մայիսի 8-ի «Աշխատավորների կոմունիստական դաստիարակության և գիտատեխնիկական առաջընթացի գործում գրադարանների դերի բարձրացման մա-

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, թ. 64—65։

19 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 156, թ. 8—9։

20 «ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, 1975 թ. սեպտեմբեր», էջ 73։

21 Նույն տեղում, 1979 թ., հունիս, էջ 24։

սին» որոշման[22] կենսագործումը հանրապետությունում։ Այդ որոշումը ոչ միայն նախանշեց գրադարանների խնդիրներն ու աշխատանքի բովանդակությունը, գրքի պրոպագանդման, գրադարանային ֆոնդերի արդյունավետ օգտագործման ակտիվ ուղիները, այլև սահմանեց գրադարանային շինարարության կազմակերպական սկզբունքները զարգացած սոցիալիզմի պայմաններում և գիտատեխնիկական հեղափոխության տվյալ փուլում։ Ի կատարումն ՍՄԿԿ Կենտկոմի որոշման, ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1974 թ. օգոստոսի 1-ին ընդունեցին համապատասխան որոշում[23]։ Դրանով աշխատավորների քաղաքային և շրջանային սովետների գործկոմներին, կուլտուրայի և լուսավորության մինիստրություններին հանձնարարվում էր քաղաքային և շրջանային գրադարանների բազայի հիման վրա միասնական ցանց ստեղծելու միջոցով 1975—1980 թթ. անցկացնել պետական մասսայական գրադարանների կենտրոնացում՝ միասնական հաստիքներով, գրքային ֆոնդով, գրականության կենտրոնացված համալրմամբ և մշակմամբ։

ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի առաջադրած խնդիրները համակողմանիորեն ուսումնասիրվեցին շահագրգռված բոլոր մինիստրությունների և գերատեսչությունների, և, ամենից առաջ, կուլտուրայի մինիստրության և ՀԱՄԽ-ի կողմից։ Որոշումը հանգամանորեն քննարկվեց 1974 թ. օգոստոսին հրավիրված գրադարանային աշխատողների հանրապետական խորհրդակցությունում, որին մասնակցում էին նաև կուսակցական, սովետական մարմինների, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության և մշակույթի գործիչներ[24]։

Լուրջ և մանրազնին նախապատրաստությունից հետո պետական մասսայական գրադարանների կենտրոնացման հարցը 1975 թ. մարտի 3-ին քննարկվեց կուլտուրայի մինիստրության կոլեգիայի և կուլտուրայի աշխատողների հանրապետական կոմիտեի նախագահության համատեղ նիստում[25]։ Որոշվեց պետական մասսայական գրադարանների ցանցը հանրապետության բոլոր 36 շրջաններում և 21 քաղաքներում կենտրոնացնել։ Նախատեսվում էր շրջանային և քաղաքային սովորական և մանկական, ինչպես նաև ինքնուրույն գործող գյուղական և ակումբներին կից գործող գրադարանների բազայի վրա ստեղծել գրադարանային կենտրոնացված համակարգեր՝ 36 շրջանային, 4 քաղաքային (Երևան, Լենինական, Կիրովական, Դիլիջան) և մեկ մանկական (Երևան)։ Հաստատվեց գրադարանների կենտրոնացման գրաֆիկ պլանը, համաձայն որի կենտրոնացումը պետք է ավարտվեր 1980 թ.։ Կազմվեց և հաստատվեց նաև պետական մասսայական գրադարանների կենտրոնացման կանոնադրությունը։

Կենտրոնացումը կազմակերպված անցկացնելու և սահմանված ժամկետներում ավարտելու համար եռանդուն գործունեություն ծավալեցին կուսակցական, սովետական մարմինները, կուլտուրայի հիմնարկները, մասնավորապես կուլտուրայի մինիստրության գրադարանների բաժինը։ Պարբերաբար անց էին կացվում գրադարանային աշխատողների հանրապետական և ռեգիոնալ սեմինար-խորհրդակցություններ, հավաքներ և հրահանգավորումներ։ Կենտրոնացման ընթացքը հաճախակի քննարկվում էր կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեների բյուրոներում և պլենումներում, քաղսովետների և շրջսովետների սեսիաներում, գործկոմների նիստերում։ Կենտրոնացման աշխատանքների ամենամյա արդյունքները և հաջորդ տարվա օպերատիվ պլանը քննարկվում և հաստատվում էր կուլտուրայի մինիստրության կոլեգիաներում, ինչպես նաև մինիստրության կուսակցական ընդհանուր ժողովներում[26]։ Միաժամանակ հետևողականորեն նախապատրաստվում և անցկացվում էին կու-

---

22 «Об идеологической работе КПСС», М., 1977, с. 551—557.

23 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 111, գ. 22, թ. 155—160, «Коммунист», 1. II. 1975.

24 «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1974, № 8, էջ 5—14։

25 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 23, թ. 23, 25, 26—28։

26 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4241, ց. 1, գ. 58, թ. 14—20։

սակցական և պետական այդ կարևոր փաստաթղթի մյուս պահանջները, որոնք ուղղված էին գրադարանային գործի արդյունավետության հետագա բարձրացմանը։ Այսպես, կուլտուրայի մինիստրությանն առընթեր ստեղծվեց պետական միջգերատեսչական գրադարանային հանձնաժողով։ Հաստատվեց հանձնաժողովի կանոնադրությունն ու նոր անձնակազմը[27]։

Նախատեսված միջոցառումների ողջ համակարգի հետևողական կենսագործման շնորհիվ տարեցտարի գրադարանային գործը բարելավվում էր, իսկ գրադարանների գործունեության արդյունավետությունը՝ բարձրանում։ Այսպես, ՀԿԿ Կիրովականի քաղկոմի 1978 թ. ապրիլի 27-ի պլենումում նշվեց այն գործնական ղեկավարությունն ու օգնությունը, որ կենտրոնացված գրադարանային համակարգը ստանում էր քաղաքի կուսակցական, սովետական կազմակերպություններից և, հատկապես, քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի կողմից։ Եթե 1975 թ. քաղաքի բոլոր գրադարանների հասարակական-քաղաքական գրականության ֆոնդը կազմում էր 40 հազար կտոր, իսկ տարվա ընթացքում ընթերցողներին էր տրվել 57 հազար կտոր գիրք, ապա 1977 թ. հասարակական-քաղաքական գրականության ընդհանուր ֆոնդը մոտ երեք անգամ ավելացել էր և ընթերցողներին տրվել էր 900 հազար կտոր գիրք։ Ֆոնդի շրջանառությունն աճել էր չորս անգամ։ Համակարգում մեկ գրքի շրջանառությունը կազմել էր 3,5 միավոր կամ ընթերցողը միջին հաշվով կարդացել էր 28 միավոր գիրք[28]։ Դա հանրապետական և միութենական ցուցանիշների հետ համեմատած լուրջ նվաճում էր։ Պլենումում գոհունակությամբ նշվեց, որ ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրությունը հանձնարարել էր երկրի գրադարաններում ուսումնասիրելու կիրովականցիների փորձը։ Այդ նպատակով արդեն Կիրովականի գրադարաններն էին այցելել Մոսկվայի, Լենինգրադի, Ռիգայի, Տալինի, Բաթումիի և Երևանի գրադարանային աշխատողները։

Ինչպես սահմանված էր ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից, 1980 թ. ավարտվեցին պետական մասսայական գրադարանների կենտրոնացման աշխատանքները։ Այդ փաստը վավերացրեց Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության 1980 թ. դեկտեմբերի 23-ին կայացած կոլեգիան[29]։ Զատազանց կարևոր էր, որ կենտրոնացմանը զուգընթաց կոնկրետ մարմնավորում ստացավ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գլխավոր պահանջը՝ աշխատավորների կոմունիստական դաստիարակության և գիտատեխնիկական առաջադիմության ասպարեզում գրադարանների դերի բարձրացման խնդիրը։ Այդ էին վկայում 1980 թ. դրությամբ գրադարանների կենտրոնացված համակարգերի աշխատանքային ցուցանիշները։ 1975 թ. համեմատությամբ 1980 թ. ավելի քան 2 միլիոնով ավելացավ գրքային ֆոնդը և կազմեց 20 միլիոն 147 հազար օրինակ, 18-ով՝ պետական-մասսայական գրադարանների թիվը, հասնելով 1343-ի[30]։

10-րդ հնգամյակի ընթացքում հանրապետությունում կատարվեց նաև թանգարանների մասնակի կենտրոնացում։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1975 թ. հոկտեմբերի 27-ի՝ «Հանրապետությունում թանգարանային գործի հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշման համաձայն թանգարանների աշխատանքի կոորդինացումն ուժեղացնելու նպատակով ինքնուրույն գործող 10 տուն-թանգարաններ, ելնելով դրանց պրոֆիլային առանձնահատկություններից, վերածվեցին հանրապետության երեք կենտրոնական թանգարանների (ՀՍՍՀ հեղափոխության, Հայաստանի պատմության և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի) մասնաճյուղերի[31]։ ՀՍՍՀ հեղափո-

27 «ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, 1974 թ. հոկտեմբեր-նոյեմբեր», էջ 116—117, 1977 թ. հունվար, էջ 107։

28 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 3566, ց. 15, գ. 4, թ. 151—158։

29 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 53, թ. 3—6։

30 ՀՍՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության կուլտուրայի վիճակագրության բաժնի ընթացիկ արխիվ։

31 «ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, 1975 թ. հոկտեմբեր», էջ 95—98։

խության պետական թանգարանի մասնաճյուղերի վերածվեցին, օրինակ, Ստ. Շահումյանի տուն-թանգարանը Ստեփանավանում, Բ. Ղարիբջանյանի տուն-թանգարանը Լենինականում, «Հայաստանում սովետական կարգերի հաստատման թանգարանը» Իջևանում և այլն։ Նույն սկզբունքով հետագայում կազմակերպվող գրեթե բոլոր հուշաթանգարանները, և ոչ միայն այդպիսիք, դրվում էին կենտրոնական թանգարանների ենթակայության տակ։ Այսպես, Օրբելի եղբայրների տուն-թանգարանը Ծաղկաձորում և Սպիտակի երկրագիտական բնույթի թանգարանը դարձան Հայաստանի պատմության թանգարանի մասնաճյուղերը, իսկ Դ. Դեմիրճյանի հուշաքնակարանը Երևանում, Ա. Տիգրանյանի տուն-թանգարանը Լենինականում Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի մասնաճյուղերը։ Հայաստանի պետական պատկերասրահի մասնաճյուղեր ստեղծվեցին Եղեգնաձորում, Մարտունիում, Լենինականում, Սիսիանում և այլուր։

Ըստ պրոֆիլների թանգարանների կենտրոնացման սկզբունքը հնարավորություն տվեց մի կողմից զգալիորեն ուժեղացնել գլխավորապես շրջաններում տեղադրված այդ մասնաճյուղ-թանգարանների գիտամեթոդական ղեկավարությունը, իսկ մյուս կողմից՝ պայմաններ ստեղծեց ֆոնդերի շարժը բարելավելու և, մանավանդ, ցուցադրությունները հարստացնելու ու ֆոնդերը համալրելու համար։ Բացի այդ, ցածր կարգ ունեցող թանգարաններն առաջին կարգի կենտրոնական թանգարանների մասնաճյուղերը դարձնելու ճանապարհով լուծվեց նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ նշանակալիորեն բարձրացավ մասնաճյուղ-թանգարանների գիտաշխատողների աշխատավարձը, որն էլ իր հերթին նպաստեց այդ օջախները որակյալ կադրերով համալրելուն։ Թանգարանների ղեկավարությունն ուժեղացնելու և կառավարման մակարդակը բարձրացնելու առումով մեծ նշանակություն ունեցավ նաև ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության կենտրոնական ապարատում 1979 թ. սկզբներից թանգարանների բաժնի ստեղծումը, որի շնորհիվ թանգարանների ղեկավարումը որոշակիորեն բարելավվեց[32]։

10-րդ հնգամյակի տարիներին նախադրյալներ ստեղծվեցին նաև ակումբային հիմնարկների կառավարման բարելավման ու կենտրոնացման համար։ Հանրապետության կուսակցական և սովետական մարմիններում սկսվեց լայնորեն քննարկվել այլ հանրապետությունների օրինակով Հայաստանի կոլտնտեսությունների և սովխոզների տերիտորիաներում գործող գյուղական ակումբային հիմնարկների միավորման և կուլտուրայի տան գլխավորությամբ միասնական ակումբային համակարգերի ստեղծման նպատակահարմարության հարցը[33]։ Նախապատրաստական աշխատանքներում ակտիվորեն ընդգրկվեց հանրապետական կուսակցական-սովետական մամուլը։ «Կոմունիստ» թերթը փորձի փոխանակման կարգով տպագրեց իր հատուկ թղթակցի ընդարձակ ռեպորտաժը այդպիսի ակումբային համակարգերից մեկի արդյունավետ գործունեության մասին Մոսկվայի մարզում։ Դրան հաջորդեցին կոնկրետ վերլուծողական նյութ և առաջարկություններ պարունակող մի քանի այլ հրապարակումներ[34]։ Համապատասխան նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության կոլեգիան 1980 թ. ապրիլին քննարկեց թերթի ելույթները և նպատակահարմար գտավ փորձնական կարգով հանրապետությունում ստեղծել ակումբային երեք կենտրոնացված համակարգեր՝ Հոկտեմբերյանի, Էջմիածնի և Ղափանի շրջանների կուլտլուսհիմնարկների բազայի վրա[35]։ Այդ քայլը սկիզբ դարձավ այն լայն աշխատանքների, որոնք 11-րդ հնգամյակի տարիներին շարունակվեցին տարվել կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական մարմինների, կուլտուրայի և մարզական կազմակերպությունների կողմից՝ հանրապետության քաղաքներում և շրջաններում կուլտուր-մարզական համալիրների ստեղծման

32 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 124, գ. 38, թ. 52։

33 Նույն տեղում, գ. 29, թ. 5։

34 «Коммунист», 12. IX. 1979; 7. 11. 1980; 31. V 1980.

35 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 39, թ. 19—21։

ուղղությամբ։ Այդ աշխատանքների նշանակությունը շեշտելու համար բավական է ասել, որ այն արտացոլվել է կուսակցական այնպիսի կարևոր փաստաթղթում, ինչպիսին «Հայաստանի հանրապետական կուսակցական կազմակերպությունում ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումի որոշումների կատարման ընթացքի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումն է (1984)[36]։

Այսպիսով, Հայաստանի կոմկուսի հետևողական աշխատանքի, կուլտուրլուսավորական հիմնարկների կառավարման կատարելագործմանն ուղղված միջոցառումների մի ամբողջ կոմպլեքսի կենսագործման շնորհիվ 9-րդ և 10-րդ հնգամյակի տարիներին հնարավոր դարձավ անհրաժեշտ պայմաններ ստեղծել հանրապետությունում ակումբների, կուլտուրայի տների, գրադարանների և թանգարանների գործունեությունը բարելավելու, աշխատավորների կոմունիստական դաստիարակության ասպարեզում դրանց դերը բարձրացնելու համար։

ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМПАРТИИ АРМЕНИИ ПО СОВЕРШЕНСТВОВАНИЮ УПРАВЛЕНИЯ КУЛЬТУРНО-ПРОСВЕТИТЕЛЬНЫМИ УЧРЕЖДЕНИЯМИ (1971—1980)

СЕРГЕЙ АМИРЯН

Резюме

В годы 9-ой и 10-ой пятилеток существенно повысился уровень партийного руководства культурно-просветительными учреждениями республики. Компартией Армении большое внимание уделялось совершенствованию организационных принципов учреждений культуры, всей системы культурного обслуживания населения, расширению и централизации сети массовых библиотек, клубов и музеев.

Важное значение придавалось улучшению управления и ведомственного руководства культурно-просветительными учреждениями. В связи с этим в партийных документах, постановлениях директивных органов особое значение придавалось работе Министерства культуры Армянской ССР, в системе которого действвоало более 90% всех учреждений культуры республики.

В результате осуществления целого комплекса мероприятий по улучшению партийного и ведомственного руководства культурно-просветительными учреждениями были созданы определенные предпосылки для дальнейшего совершенствования деятельности учреждений культуры, повышению их эффективности.

---

36 «ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը «Հայաստանի հանրապետական կուսակցական կազմակերպությունում ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումի որոշումների կատարման ընթացքի մասին», Երևան, 1984, էջ 7։